

**Քննարկվեցին «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրին առնչվող հարցեր**

ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534 \_Ն որոշման համաձայն ՀՀ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրով նախատեսված «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրի շրջանակներում փետրվարի 3-ին ՀՀ Սյունիքի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում:

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տարածքային ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Ավետիսյանը, Սյունիքի մարզի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն Ա.

Հակոբյանը, մարզի գյուղական համայնքների ղեկավարներ:

Հանդիպման ընթացքում եղան հարցեր, որոնք վերաբերում էին սեզոնային *զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման կարգին*, հողօգտագործողների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը, ծրագրի իրականացման առանցքային դրույթներին, իրավահարաբերություններին:

Գյուղական համայնքների ղեկավարները պատրաստակամություն հայտնեցին օժանդակելու զբաղվածության տարածքային կենտրոնի հետ համագործակցությանը, ինչպես նաև ծրագրով նախատեսված և իրականացվելիք աշխատանքների դիտարկումների և կազմակերպման հարցերում:

